

մետրապոլիտի և Տէր Ներսիսի ի միասին նկարուած գունագեղ պատկերէն: Երկու արքեպիսկոպոսներն ալ կը ներկայանան եկեղեցական զգեստով և աւետարանով՝ զորք չորեքտասաներորդ դարու, երկուքին զգեստներն ալ աւելի յունական են քան հայկական: Սարգիս Սիւնեաց արքեպիսկոպոսը իր ճկոյթ և բութ մատերուն ծայրերը իրարու միացուցեր է և ասով կը կազմէ Օ գիրը, իսկ միջին մատերը արձակ թողուցեր է, որով կը կազմուի մեր հայ այր բոլորգիրը: Արդ տեսանք կանխապէս, որ այս երկու գիրերն ալ գործածուած են A և Ձ գրոց տեղ. հետևաբար կարելի է ենթադրել, որ այդ խորհրդանշները մեր մէջ անցեր են իւրզանդական ազդեցութեամբ. և հետևողքը որչափ ճարտարաբանութեան նիւթեր պիտի նշմարեն մեր ձեռագրաց նկարներուն մէջ, որոնք բուն իսկատիպ հայկական են, և այլը՝ որք եկամուտ են բայց ազնուացած և պերճացած:

Կը կրնանք այս մասին մեր դիտողութիւնը հարեանցի ակնարկ մը տալէն վերջ, թողլով հմուտ հնագիտաց պրպտելու ենթադրութեանց ասուգութիւնը և ի լոյս բնծայելու աւելի բազմատեսակ հետախուզութեանց մեր անգին և սիրելի հայրենեաց բովերը:

Ո. Կ.

Իւնչ Է ԵՐԱՃՇՏՈՒԹԻՒՆԸ

Երաժշտութիւնը ամէն արուեստներու թագուհին ըլլալով, ամէնքէն աւելի կը բացատրէ ընկերութիւնը՝ յորում կը ծաղկի:

ՃՈՌՊԵՐԹ

Երաժշտութեան սէրը առաջ կու գայ, ինչպէս ամէն արուեստի սէրը, հոն՝ ուր որ բարի բան կը փնտռենք ու գտնուածն ալ կը զնահատենք:

ԿԻՅԹԻ

ԼԵԶՈՒԱԳԻՏՈՒՆ

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս. ԿԻՐԻՂԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻՈՑ

ԿՈՉՈՒՄՆ ԸՆԶԱՅՈՒԹԵԱՆ

(Շար. տես 1921 թվ. էջ 376)

ԻԴ.

Էջ 148. տող 28. «Զի Խուլակոյր հերետիկոսացն իբրև բարբառով գոչեն և ցուցանեն զեղեցիկ կարգաւորութեամբն, եթէ ոչ այլ ոք է արարիչ և հաստիչ, բայց միայն Աստուած»:

Ուղղ. Զի Խոյ և Կոյր. Հերետիկոսք արարչական բնութեան զեղեցկութիւնը և տիեզերական երգը, ըստ սաղմոսագրութիւն «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ» են. Խուլ և Կոյր լինելուն համար, ոչ աչք ունին տեսնելու և ոչ ականջ լսելու:

ԻԵ.

Էջ 153. տող 7. «Ի թոչնոց... կանչողք». այսինքն երգիչ:

ԻԶ.

Էջ 168. տող 23. «Զրահար պոռնիկն ապրեցուցանէր կրօնաւորն յետու»? Հոս բնագրէն տարբերի մերս թարգմանութիւն:

ԻԷ.

Էջ 170. տող 24. «Ո՛վ է սուտն, եթէ ոչ որ ուրանայ եթէ չէ Յիսուս Քրիստոս»:

Ուղղ. «Եթէ Յիսուս չէ՝ Քրիստոսն, Հրէայք զՅիսուս ընդունէին, բայց ոչ զՔրիստոս այսինքն Մարդ և Աստուած»:

ԻԸ.

Էջ 170. տող 25. «Այլ Քրիստոս է քահանայապետ, որ առանց անցանելոյ

ունի զքահանայապետութիւնն. ոչ ժամանակօր սկսեալ զքահանայապետութիւնն, և ոչ մարմնաւոր զորք փոխանակ առեալ ի քահանայապետութիւն, այլ որպէս ասացան յառաջ. « Թէ ըստ չափոյն մեղքիսեղեկի »: Եւ ոչ եթէ ըստ հանդերձանի ձիթոյն ամէկ ի քահանայութիւն, այլ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէն ընկալեալ »:

Ուղղ. ամեհալ ի քահանայութիւն:

ԽԻ.

Էջ 175. տող 2. « Վկայէ և երանեալ տեղի մարոյն. եզրպատոս յարուցեալ տայ վկայութիւն, որ ի մատաղ ղարմիսն զտէրն առեալ սնուցանէր »:

Ուղղ. Որ ի մատաղ մարմինն (տիսն) զտէրն սնուցանէր: Քանզի փրիստոս մաւնուկ էր Եզրպատոս փախած ժամանակ, թէ և Տէր և Աստուած էր ի մատաղ հասակին:

Ծ.

Էջ 176 տող 8. « Վկայեն անծրեաժին ամպը, որ ընկալան զտէրն ի բարձունս: Վկայեն զորունք հնացեալք, վասն որոյ ասէ սաղմոսարանն: « Ամբարձէք իշխանք զզորունս ձեր ի վեր, և մտցէ Թագաւոր փառաց »:

Ուղղ. վկայեն զորունք հիացեալք յոս (երկնից): Թաւրտեհական դռներն որ կը բացուէին փրիստոսի առաջ, կընային հնացած լինել, այնպէս ինչպէս է Հինաւորացն. սակայն Համբարձման օրը, երբ երկնքի իշխանները տեսան զփրիստոսի յաղթական մուտքը երկնքը կարմիր ձորձով, գեղեցիկ պատմունանով և բուռն զօրութեամբ, պէտք է որ հիացած լինէին իրենք և յաւիտեանական դռներն, Աստուծոյ իշխանութիւնը:

ԾԱ.

Էջ 180. տող 1. « Այս թէ ո՞րպէս զխորդ ի փրիստոս Յիսուս »:

Ուղղ. Զնջելով հարցականներն և նաև զխորդը:

ԾԲ.

Էջ 190. տող 12. « Արդ հաւատամք այսուհետև յՈրդին աստուծոյ միածինն ծնեալ որ ի Հօրէ ծնեալ՝ յԱստուած ճշմարիտ »:

Ուղղ. ծնեալ աւելորդ է. « Արդ հաւատամք այսուհետև յՈրդին Աստուծոյ միաշինն, որ ի Հօրէ ծնեալ, Աստուած ճշմարիտ »: Հաստատմբի խօսքերն են, որով դաւանիք թէ Հօր միածին Որդին է Աստուած ճշմարիտ:

ԾԳ.

Էջ 205. տող 6. « Ի վեց աւուր արար Աստուած զաշխարհ, այլ աշխարհս վասն մարդոյ »:

Ուղղ. ի վեց աւուր արար Աստուած զաշխարհ, այլ աշխարհս վասն մարդոյ եղև:

ԾԴ.

Էջ 206. տող 12 « Առաջին օրինադիրն մովսէս, որ ասաց. « Բայ մի՛ շնայցես » այր մի ի հեղց մի մտեալ աղտեղութիւն գործէր »:

Տպագիրն ի ծանօթութեան ասէ « յոյնն Κοιμισας, որ նշանակէ ՀնՈՅ, դարձեալ Բոզանոց »: Թարգմանիչն սխալ հասկացած չէ յոյն բառը, այլ Ս. Հօր Խօսքը կ'սկսարկէ Թուոց Գրքի Գլ. Իե. հ. 8. ուր Փեննէս «առեալ գեղարդն ի ձեռն իւր և եմուտ գհետ առնն իսրայելացւոյն ՀնՈՅն և խոցեաց գերկոսին»: Էն. լատինն ունի lupanar որ է յոգանոց: Ո՞րպէս նախնիք թարգմանեցին հնոց. չիցէ՞ վրիպակ գրեալ գրի իբր թէ չնկոց? Իսկ հնոցն՝ է քոնիլոն, ուր մտած էր Զամբրի:

ԾԵ.

Էջ 215. տող 12. « Այլ զի պարտ և պատշաճ էր նմա մարդանալ, զայս ցուցալ լիով իորով որպէս և ասացի. և որ ինչ մնացեալ իցէ ի յանդիմանութեանց

անտի, այս մասն նոցա կայցէ, որ շուտադոյնք և իմաստնագոյնք իցեն ։

Ուղղ. Զայս ցուցաք լիով (խորով?) որպէս և ասացի... որ ուշմանադոյնք իցեն ։

ԾԶ.

Էջ 218. տող 9. « Արդ ոլիմպիաթն առ յունօք անուանի այն, որ ըստ չորս չորս ամացն ժողովին ի տօն տարեկանացն, վասն ըստ չորից ամաց արեգականն ընթացից, որ ըստ ամի երեք ժամք ժողովին և լինին օր մի » ։

Ուղղ. Որ ըստ ամի ամի վեց ժամք ժողովին և լինին օր մի։ Այս կտորն ևս ցուցանէ թէ մեր թարգմանութիւնը Միլիների անգրէն կը տարբերի՝ այլ ձեռագրէ եղած ։

ԾԵ.

Էջ 293. տող 3. « Վկային մեծի յաբութեանն. Պետրոս և Թովմաս և Յովհաննէս, և այլ ամենայն առաքեալք... կանայք՝ որ կայան զոտս նորա... զի նուորքն, արծաթն որ տուաւ, տեղին ինքն ուր կոյսն էր, տունս սուրբ եկեղեցոյս » ևն ։

Ուղղ. Տեղին ինքն ուր կոյսն տունս սուրբ եկեղեցոյս։ Մատթէոս Աւետ. « Եկայք տեսէք զտեղին ուր կայր » ։ Ս. Հայրը ի միջի այլոց վկայութեանց կ'ըսէ նաև այս տեղը, ուր եղաւ զերեզման Քրիստոսի, շինուեցաւ սուրբ եկեղեցիս, իբր վկայ յարութեան Տեառն։ Իսկ յոյնը երեկի կամ փառաւոր ։

ԾԸ.

Էջ 294. տող 3. « Արդ ի բեթղհէնն յերկնից իջանէր, և ի լեռնէն ձիթենեաց յերկինս վերանայր » ։

Ուղղ. Արդ աւելորդ. ի բեթղհէնն յերկնից իջանէր, ի լեռնէն ձիթենեաց յերկինս վերանայր ։

(Շարումակիլի)

Հ. ԳԱՐԸ. ՆԱԶԱԳՅՏՆԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՄԱՇՏՈՑԻ ՄԷՋ

(Շար. տես 1921 թվ. էջ 344)

Խաչումեղիստ « Խաչալուայ, ջուր օրհնելը » ։ Կանոն խաչալուայ առնելոյ որ կոչի խաչահանգիստ. Մաշտ. 301 ։

Խաչվառ « Խաչանիշ զրօշ. եկեղեցական զարդ մը » ։ Գնան քահանայք ի տուն մեռելոյն շուրջառաւ, խաչիւ, խաչվառաւ, բուրվառաւ և մոմեղինօր. Մաշտ. 441 ։

Խարտափրակ « Կրօնաւոր ձեռնարկուող անձին օժանդակը » ։ Եւ սարկաւազն կամ խարտափրակն անէ զնուիրեալն առ եպիսկոպոսն. Մ. մաշտ. 237. տնս նաև 240 ր. 242 ա. ևն. — Բառս առանձնապէս կը յիշէ Զախշ. իսկ Նէֆ թէ և առանձին չունի, բայց կը զնէ քրդապահ բառին տակ, իբրև փոխառութիւն յն. χαρτοφύλακ « գրականագետ, թղթագահ » բառէն ։

Մարդկոտեսիլ « ծաղկի նման տեսքով » ։ Չուարթասաղարթ, ծաղկեայտեսիլ (!) և հսկայածե անձամբքս. Մ. մաշտ. 24 ա ։ Կատարելապէս « կատարեալ կազմով, ոչ պակասաւոր » ։ Զմի մարմին կատարելապէս՝ զմարդոյ կամ զանասնոյ՝ ոչ ոք կարէ յերկուս հատանել. Մ. մաշտ. 231 ր ։

Կիսատարկատուութիւն « սարկաւազութեան երկրորդական աստիճանը » ։ Հին գերորդ կարգ աստիճանի կիսասարկաւազութեան. Մ. մաշտ. 240 ր ։

Հայաօրհնէք « պակի նախնական կարգը, այն է նորապսակներուն զգեստները օրհնել » ։ Մաշտ. 121-4 (տպուած է սըխալմամբ իբր երկու բառ) ։

Համեստաբարոյ « համեստ բարքով, պարկեշտ » ։ Պարզեւեմ սոցա, Տէր, զառողջ կեանս, զառաքելին վարս և զհամեստաբարոյ երջանկութիւնս. Մաշտ. 705 ։ Հատրհնէք « եկեղեցոյն ընծայարեւոտած թռչունները օրհնելու կարգը » ։ Կանոն Հաւօրհնէքի. Մ. մաշտ. 89 ր. (սըխալմամբ տպուած է իբրև երկու բառ) ։

Հերետիկոսպետ « հերձուածողներուն »

2011-55

digitised by

A.R.A.R.®

